

GLOBAL MANAGEMENT CHALLENGE-Ը ՇԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

ԱՇԽԱՐՀԱՅՈՒՉԱԿ ԳՈՐԾԱՐԱՐ ԽԱՂԵՐԸ ՉԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է «Ի-ՎԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳԸ»



այաստանյան բիզնես կրթության և վերապատրաստման բնագավառում 2010թ. սպասվում է հետաքրքիր իրադարձություն: «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը նախաձեռնել է Global Management Challenge (GMC) միջազգային ռազմավարական խաղերի անցկացումը Հայաստանում: Business Class-ին տված հարցազրույցի ընթացքում ընկերության տնօրեն Մանուկ Չերգնյանը ներկայացնում է մրցույթի էությունը և ռազմավարական նշանակությունը Հայաստանի բիզնես կրթության բնագավառում:


- Ի՞նչ է GMC-ն:

- Global Management Challenge-ը հեղինակավոր մրցույթ է ռազմավարական կառավարման բնագավառում: Այն առաջին անգամ անցկացվել է Պորտուգալիայում 1980թ.: Ներկայումս մրցույթի աշխարհագրությունը ներառում է ավելի քան 30 երկիր, որոնք տարեկան ներկայացնում են 20 հազ. մասնակից:

Խաղերը հիմնված են բիզնեսի սիմուլյացիոն մոդելների վրա: Մրցույթին մասնակից թիմերն ստանձնում են վիրտուալ ընկերությունների կառավարումը և միմյանց հետ մրցակցում են դրանց շուկայական կապիտալացումն առավելագույնի հասցնելու համար:

- Որո՞նք են Հայաստանում խաղերն անցկացնելու հիմնական շարժառիթները:

- GMC-ն պարզապես մրցույթ չէ: Այն հավակնում է դառնալ ռազմավարական



գործիք Հայաստանի բիզնեսի կառավարման մասնագիտական կրթության բնագավառում:

Բիզնես կրթության ոլորտը Հայաստանում ներկայանում է մի շարք բացերով, որոնք նպաստում են ոլորտի ցածր մրցունակությանը միջազգային համատեքստում: Ներկայումս կառավարման դպրոցների որակի վարկանիշով Հայաստանը 133 երկրների շարքում զբաղեցնում է 125-րդ տեղը՝ համաձայն Համաշխարհային մրցունակության զեկույցի: Համալսարանական կրթության համակարգում բացակայում են ուսուցման ինտերակտիվ մեթոդները և գործնական օրինակները, իսկ ստացած գիտելիքները հաճախ ֆրագմենտար են, ուսանողները մեծ դժվարություններ ունեն այդ ամենն ինտեգրելու և ընկերությունների կառավարման բոլոր կողմերը միասնական համատեքստի մեջ պատկերացնելու:

Ակնկալվում է, որ ծրագիրը կնպաստի կառավարման ոլորտում բուհական դասավանդման բացերի բացահայտմանը և հասցեագրմանը: Այն կառավարման ժամանակակից մոտեցումներ կներմուծի հայկական ընկերություններ և կկրթի բարձրակարգ կառավարիչների նոր սերունդ:

- Ո՞րն էք համարում GMC խաղերի նպատակային յառանը Հայաստանում:

- Հայաստանում GMC-ի շահառուներն են ընկերությունները, ուսանողները և կառավարությունը: Ընկերությունների համար GMC-ն կհանդիսանա որակյալ աշխատուժի ներգրավման, աշխատողների արդյունավետ վերապատրաստման և ընկերության գովազդման արդյունավետ գործիք: Ուսանողները հնարավորություն կստանան ձեռք բերել գործնական բիզնես գիտելիքներ և կառավարման փորձառություն: Հասցեագրելով մի շարք հիմնախնդիրներ,

ինչպիսիք են կառավարման և բիզնես կրթության որակի բարձրացումը և բարձրակարգ կադրերի ապահովումը՝ GMC-ն զգալի նշանակություն ունի նաև պետական քաղաքականության համատեքստում:

- Այս մրցույթն ի՞նչ դերակատարում կարող է ունենալ Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում:

- Մրցույթի գործնական նշանակությունը ճանաչված է աշխարհի տարբեր հեղինակավոր համալսարանների և կառավարման դպրոցների կողմից, ինչպիսիք են Oxford-ը, Cambridge-ն (Մեծ Բրիտանիա), ESADE-ն (Իսպա-

կառավարիչները կարող են կարճ ժամանակահատվածում տեսնել կայացրած որոշումների հետևանքները և հասկանալ սխալները:

Ինչպես արդեն նշեցի, համալսարանական կրթությանը և արդյունքում ձևավորված գիտելիքներին բնորոշ է մասնատվածությունը: GMC մրցույթի ընթացքում վիրտուալ ընկերություն կառավարելիս մասնակիցները հնարավորություն են ստանում տեսնել ընկերության ողջ գործառնական պատկերը, իսկ ռազմավարական որոշումներ կայացնելու համար համախմբում և ամբողջականացում են տարբեր ոլորտներին վերաբերող գիտելիքները:

- Ի՞նչ հեղափոխություն կարող է ունենալ հայ բիզնեսմենը GMC խաղերում:

- GMC-ին մասնակցությունն ապահովում է ընկերություններին մի շարք առավելություններով: Այն հանդիսանում է մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ գործիք և կարող է օգտագործվել անձնակազմի գնահատման, վերաախտրաստման, խթանման և մոտիվացման գործընթացներում:

GMC-ին մասնակցությունը կարող է հանդիսանալ նաև ընկերության գովազդային արշավի առանցքային բաղադրիչներից մեկը: Այն ընկերություններին առաջարկում է PR գործիքների ընդարձակ փաթեթ:

Ամբողջ աշխարհում մրցույթին մասնակցում են տարբեր ոլորտներից համաշխարհային խոշորագույն ընկերություններ, ինչպիսիք են CityBank-ը, HSBC-ն, ING-ը, Orange-ը, Vodafone-ը, Accenture-ը, Deloitte-ը, Ernst&Young-ը, KPMG-ն, PWC-ն, Microsoft-ը, IBM-ը: Ռուսաստանի մասնակիցներից են PAO EՅС-ը, MTC-ը, ЛУКОЙЛ-ИНФОРМ-ը և այլն:

Global Management Challenge-ը հեղինակավոր մրցույթ է ռազմավարական կառավարման բնագավառում: Այն առաջին անգամ անցկացվել է **1980թ.:**



նիա), որոնք յուրաքանչյուր տարի իրենց համալսարանական քիմերն են ներկայացնում մրցույթին մասնակցության համար:

GMC-ին մասնակցության շնորհիվ ուսանողները ձեռք են բերում կառավարման ոլորտում ժամանակակից գիտելիքներ, կիրարկում են դրանք գործնականում: Ավելին, առանց շուկայում ձախողման իրական ռիսկերի, վիրտուալ ընկերությունների

- Ինչպե՞ս են կազմակերպվում խաղերը Հայաստանում:

- Հայաստանում GMC խաղերը կազմակերպում և կոորդինացնում է «Ի-Վի Բոնասաթինգ» ընկերությունը:

Մենք շուտով կհայտարարենք խաղերի գրանցման սկիզբը, երբ ձևավորված թիմերը կայքում գրանցման միջոցով պետք է հայտարարեն խաղերին իրենց մասնակցության ցանկության վերաբերյալ: Կախված թիմերի քանակից՝ կձևավորվեն ենթախմբերը: Այնուհետև յուրաքանչյուր թիմ (3-5 մասնակից) ստանում է վիրտուալ ընկերություն, ընկերության ղեկավարման համար ձևա-

պես կառավարման փորձառություն ունեցող, կարողանում են սրբակտիկ հետևություններ անել, որոնք կիրառելի են իրենց առօրյա գործերում:

- Որո՞նք են GMC-ին մասնակցության պայմանները:

- Նշեմ, որ ի տարբերություն որոշ երկրների, որտեղ մրցույթի կազմակերպումը սկզբնական շրջանում հովանավորվում է կառավարության կողմից, «GMC-Հայաստանը» ֆինանսավորվելու է բացառապես հովանավոր ընկերությունների գումարներով և թիմերի մասնակցության վճարներով: Ընկերությունների համար ներկայացվելու են հովանավորչական տարբեր փաթեթներ: Խոշոր

- Մենք կարծում ենք, որ նմանատիպ յուրօրինակ հնարավորությունը կառաջացնի լուրջ հետաքրքրություն մասնագիտական շրջանակներում: Համեմայն դեպք, հիմնվելով համալսարանական դասավանդման և հայկական խոշոր և միջին չափերի ընկերություններին խորհրդատվության մատուցման մեր փորձառության վրա, կարող ենք փաստել, որ նմանատիպ գործիքի կարիքը շատ մեծ է: Մասնագիտական կրթության և պատրաստվածության որակից անընդհատ բողոքելը խնդիրը չի լուծում: Խնդիրը լուծվում է միայն կոնկրետ գործիքների ներմուծմամբ և օգտագործմամբ: Ես հստակ տեսնում եմ, թե ինչքան բազմապիսի օգուտներ կարող է բերել այս խաղին շատ ու շատ հայկական ձեռնարկությունների ղեկավար թիմերի մասնակցությունը: Օրինակ՝ ներքին արդյունավետ հաղորդակցությունը, որոշումների կոորդինացիան լրջագույն խնդիրներ են շատ ընկերություններում: Այս խաղի ընթացքում դրանք ուղղակի դառնում են պարտադրված անհրաժեշտություն, քանի որ ռազմավարական որոշումների հետևանքները շատ արագ են անդրադարձ ունենում ընկերության վրա՝ ի տարբերություն իրական կյանքի:

Վստահությունը, որ սա մեծ արձագանք կստանա հայկական խոշոր ընկերությունների և ուսանողների շրջանում, հիմնված է վերջիններիս հետ մեր նախնական հաղորդակցության վրա: Նշեմ, որ Ռուսաստանում այս տարի GMC խաղերին մասնակցելու է մոտ 250 թիմ: Իհարկե, չենք հավակնում նման մակարդակի հասցնել մասնակիցների թիվը Հայաստանում, բայց լիահույս ենք, որ մասնակցությունը մեզ մոտ նույնպես շատ բարձր կլինի: **BC**

Հարցազրույցը վարեց Արամ Մանուչարյանը

Ամբողջ աշխարհում մրցույթին մասնակցում են տարբեր ոլորտներից համաշխարհային խոշորագույն ընկերություններ, ինչպիսիք են **CityBank-ը, HSBC-ն, ING-ը, Orange-ը, Vodafone-ը, Accenture-ը, Deloitte-ը, Ernst&Young-ը, KPMG-ն, PWC-ն, Microsoft-ը, IBM-ը:** Ռուսաստանի մասնակիցներից են **PAO ԷՅՏ-ը, MTC-ը, Лукойл-Информ-ը** և այլն:

Business Class | Մարտ 2010

վորում է ռազմավարություն և ամեն շաբաթ կայացնում է ավելի քան 60 ռազմավարական որոշումներ: Հաղթում է այն թիմը, որի ընկերության բաժնետոմսերի արժեքն առավելագույնն է՝ համեմատած մրցակից ընկերությունների հետ:

Գործընթացն այնքան հետաքրքիր և կլանող է, որ անընդհատ լարվածության մեջ է պահում բոլոր մասնակիցներին մրցաշարի ամբողջ ընթացքում: Մասնակիցները շուտով սկսում են գիտակցել, որ հաղթելու գրավականը ոչ միայն ունեցած գիտելիքների ողջ պաշարի արդյունավետ կիրառումն է, այլև թիմային աշխատանքը, դերերի ճիշտ բաշխումը և հավաքական որոշումներ կայացնելու ունակությունը: Խաղն այնքան մոտ է իրականությանը, որ մասնակիցները, հատկա-

հովանավորները կօգտվեն գովազդային ընդարձակ հնարավորություններից:

Մրցույթին կարող են մասնակցել ձևավորված թիմերը՝ բուհերից կամ ընկերություններից: Ընդ որում՝ ընկերությունները կարող են կազմել կորպորատիվ թիմեր կամ հովանավորել այլ, օրինակ՝ համալսարանական թիմեր: Մասնակցության մանրամասներն առավել հանգամանալից կլուսաբանվեն «Ի-Վի Բոնասաթինգ» (www.evconsulting.am) և «GMC-Հայաստանի» (www.manager.am) էլեկտրոնային կայքերում:

- Ընդհանուր առմամբ, ինչպիսի՞ ակնկալիքներ ունեք Հայաստանում GMC առաջին խաղերից: Ձեր կարծիքով՝ մրցույթին ինչպե՞ս կարգազանրեն հայ մասնագետները: